ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Ճշմարտության Գիրքը - Նախապատարաստվեք Երկրորդ Գալուստին>>

2010թ. նոյեմբերի 9-ի առավոտյան ժամը 3-ն էր, երբ Մարիան հանկարծակի արթնացավ: Հազիվ էր հասցրել նայել թվային ժամացույցին, որը կարմիր երանգով փայլում էր իր մահճակալի կողքին, երբ գիտակցեց, որ իր մարմինն ուրիշ ձևով է զգում: Այն անկշիռ էր թվում, իսկ ստամոքսում՝ այրոցի զգացողություն ուներ, որն ասես անցնում էր դեպի ոտքերը՝ դիպչելով յուրաքանչյուր նյարդի և մկանի:

Մահճակալի կողքի լամպը միացնելուց հետո նրա ողջ մարմնով մեկ էլեկտրական հոսանքի պես ներխուժեց ֆիզիկական և հոգևոր հզոր հուզական զգացողությունների ալիքը: Հուզված և շփոթված նա նստեց տեղում: Նրա ուշադրությունն անմիջապես գրավեց մահճակալի կողքին գտնվող դարակի վրայի Հիսուսի նկարը:

Նկարի վրայի դեմքը սկսեց փոխվել: Այն կենդանացավ: Ի զարմանք իրեն, Հիսուսի պատկերը ժպտաց նրան, և Նրա Շրթունքները սկսեցին շարժվել ասես Նա խոսում էր: Նրա դեմքը կենդանացել էր՝ ամբողջ Պատկերն արտացոլում էր քնքշության, հոգատարության և կարեկցանքի միախառնված արտահայտություններ: Չնայած Մարիան չէր կարողանում լսել Նրա ձայնը, նա գիտեր բնազդաբար, որ Հիսուսը ցանկանում էր հաղորդակցվել իր հետ:

Նա անմիջապես հասկացավ, որ դա մի Աստվածային Ներկայություն էր: Պարադոքսային կերպով նա զգում էր մի հանգստացնող հանդարտություն, որը հակասում էր սենյակի ինչ-որ տեղ անիրական մթնոլորտին: Դողալով, Մարիան ասես դարձավ ինչպես փոքր երեխա Հիսուսի առջև, մինչ արցունքները դեմքի վրայով ներքև էին հոսում: Հետո զգաց այն հզոր մղումը, որ պետք է գրի այն, ինչը համոզված էր, որ Հիսուսն է ասում իրեն:

Ենթագիտակցության մեջ նա հասկացավ, որ դուռը բացվեց, լույսը վառվեց և այլևս ետ դարձ չկար:

Նա համարձակվեց վերցրեց ձեռքի տակ եղած հին ծրարն ու գրիչը, որը մահճակալի կողքին էր, և բառերը սկսեցին ձևավորվել նրա մտքում:

Նա գրում էր այն, ինչ լսում էր, ինչպես թելադրվում էր իրեն մի նուրբ , բայց ազդեցիկ ձևով: Մինչ գրիչը դիպչում էր թղթին, ամեն մի բառը ձևավորվում էր հստակորեն, պարզորոշ ու ճշգրիտ ձևով, առանց դադարի:

Նրա գրած առաջին բառերն էին. <<Քո Կամը իմ հրամանն է>>: Առանց հասկանալու թե ինչու գրեց դա, Մարիան գիտեր իր սրտում, որ դա մի բնական և ինքնաբուխ

պատասխան էր: Ինչ-որ տեղ գիտեր, որ պետք է առաջինը դա գրեր: Իսկ հետո եկավ Հիսուս Քրիստոսի կողմից նրան տրված առաջին Պատգամը:

6

Նրան թելադրված Պատգամը պարունակում էր 745 բառ, և նրանից ճիշտ 7 ոռպե պահանջվեց Այն գրելու համար, բառ առ բառ, սկզբից մինչև վերջ:

Հաջորդ առավոտյան, օրվա սառը լույսի ներքո, նրան պաշարեց անիրականության զգացողությունը: Ընկճվածությամբ հասկանում էր, որ գիշերվա ընթացքում տեղի ունեցածը չափազանց իրական էր: Ուստի կարդաց Պատգամը: Արցունքները հոսում էին, մինչ նա դողում էր շոկից ու թերահավատությունից, երբ սկսեց հասկանալ Ճշմարտությունը:

Մարիան, մի կրթված կին, չորս երեխաների մայր, վարում էր զբաղված ու բեղուն կյանք: Սովոր լինելով անընդհատ գործ ունենալ ամենօրյա առօրյա հոգսերի հետ, նա առաջինը կլիներ անտեսելու նման ամեն տեսակի հայտարարություն: Չնայած դրան, զգում էր իր սրտում, որ ոչ միայն չի երևակայում որ Պատգամ է ստացել, այլև այն , որ ինքը երբեք ի վիճակի չէր լինի նման բան գրել:

Նա նյարդայնորեն նորից վերցրեց Հիսուսի նկարը և նայեց նկարին: Սպասելով, առաջարկելով, որ նկարը նորից շարժվի: եվ այն շարժվեց: Այս անգամ Մարիան լաց եղավ, խնդրեց Հիսուսին, որ մի նշան տա, որ այդ ամենն իր երևակությունից չէ:

Առավոտյան ժամը 11-ն էր: Նկարը փոխվեց ինչպես առաջ, և Հիսուսի Դեմքը նորից կենդանացավ: Նա սպիտակ էր հագած, Վզի շուրջը՝ ոսկեգույն եզրով: Նրա Դեմքը երկար էր և նիհար: Նրա մազերը կարմրաշագանկագույն երանգի էին, մինչև Ուսերը, Աչքերը՝ ծակող կապույտ գույնի, և շրջապատված էր ծակող շլացուցիչ Լույսով: Այդ Լույսը, Մարիայի ասելով, չափազանց ուժեղ է, և ցամաքեցնում է էներգիան: Նա նայում էր Մարիային քնքշությամբ, հոգածությամբ, կարեկցանքով և մի խորը հաստատուն սիրով: Հետո Նա ժպտաց:

Մարիան մարմնում նորից ունեցավ նույն այրող, անկշիռ զգացողությունը: Նա գրեց հաջորդ Պատգամը, մի մասնավոր պատգամ: Ավելի կարճ, քան նախորդ գիշերվանը: Այս անգամ Հիսուսն ասում էր նրան, որ չվախենա: Որ, այո, Նա հաղորդակցվում էր նրա հետ: Նա կոչ արեց Մարիային չփախչել և ուժեղ լինել: Նա վստահեցրեց, որ Մարիան չի երևակայում դա:

Եվ այդպես սկսվեցին Պատգամները, չնայած, սկզբում Մարիան չգիտեր թե դրանք ինչի մասին են, ոչ էլ այն, թե դրանք ինչ են նշանակում: Նա չափազանց վախեցած էր այդպիսի Պատգամների հանդեպ հանրության արձագանքից և թեթևություն զգաց, երբ

Հիսուսն ասաց, որ Ինքը ցանկանցում է, որպեսզի Մարիան մնա թաքնված բազմաթիվ պատճառներով:

Ճշմրտությունը դանդաղորեն հասնում էր Մարիային, որ Պատգամներն իսկապես իրական են, չնայած նա ինքն իր մեջ հույս ուներ որ դա այդպես չի լինի, նա գիտակցեց, որ ինքը մեկ այլ տեսանող է:

Բայց դա այդպես չէր: Ի վերջո Հիսուսն ասաց Մարիային, թե ով է նա: Նա ասաց, որ Մարիան վերջին ժամանակների մարգարեն է (մի տերմին, որը Մարիան նախկինում երբեք չէր լսել), և որ նա ընտրվել է:

7

Մարիան ուղարկվել է որպես 7-րդ Պատգամատարը, որպեսզի Հիսուսի անունից հաղորդի Հայտնության Գրքում պարունակվող Կնիքները՝ նախապատրաստելու համար աշխարհը Հիսուսի Երկրորդ Գալուստին:

Այդ ժամանակից ի վեր Մարիան գրեթե ամեն օր Պատգամ է ստանում Հիսուս Քրիստոսից: Պատգամներից մի քանիսը տրվում են նրան Կույս Մարիամի՝ Աստծո Մոր կողմից, ով Մարիային մի նոր տիտղոս է ասել՝ Հայտնության Մայր, որով ցանկանում է հայտնի լինել:

Առաջին Պատգամը Հայր Աստծուց Մարիան ստացավ 2011թ. հունիսին: Պատգամը ստանալուց անմիջապես առաջ նա Պատգամ ստացավ Սուրբ Հոգուց, Ով հայտարարեց, որ Հայր Աստված ցանկանում է հաղորդակցվել նրա հետ:

Մարիան դողում էր Պատգամը գրելու ողջ ընթացքում ոչ թե որովհետև վախեցած էր, այլ այն Զորության և Մաքուր Սիրո պատճառով, որ Աստված ունի ողջ մարդկության հանդեպ: Աստված առաջին հերթին բացատրեց Մարիային թե ինչու է ստեղծել աշխարհը: Դա նրա համար էր, որպեսզի Նա ընտանիք ունենար:

Մարիան հռոմեական կաթոլիկ է, բայց ասում է, որ մինչև Պատգամներն ստանալը եղել է գաղջ: Նա հավատացել է Աստծուն, բայց նվիրված չի եղել սովորույթի իմաստով: Այնուամենայնիվ, առաջին Պատգամին նախորդող ամիսների ընթացքում նա հոգևոր նորացում է զգացել և ունեցել է Մարիամի մասնավոր երևումներ, չնայած նա այս ամենը պահել է ծածուկ:

Երևումների արդյունքում Մարիան սկսել է ավելի շատ աղոթել և ասել Սուրբ Վարդարանը: 2010թ. նոյեմբերի 8-ին, Տիրամոր արձանի առաջ Վարդարանն աղոթելիս է, որ վերջինս մի պատգամ է տվել Մարիային, որը նա գրել է, բայց գաղափար չի ունեցել թե դա ինչ է նշանակում:

Մարիային ասվել է, որ Քրիստոսի Երկրորդ Գալուստն անխուսափելի է, և որ նա վերջին պատգամատարն է, վերջին մարգարեն: Նրան ասվել է, որ նա 7-րդ Պատգամատարն է, 7-րդ հրեշտակը, ով աշխարհին կհայտարարի Հայտնության Գրքի Կնիքների բովանդակությունը, մինչ դրանք բացվում են Աստծո Գառան՝ Հիսուս Քրիստոսի կողմից:

Մարիային տրված Պատգամները կազմում են Ճշմարտության Գիրքը՝ կանխասացված Դանիելի գրքում վերջին ժամանակների համար:

Պատգամները տրվում են աշխարհին՝ օգնելու համար տարածելու դարձ, այնպես որ Աստծո բոլոր զավակները կարողանան փրկվել հակաքրիստոսից, ով կարճ ժամանակից պետք է հայտնվի աշխարհում:

8

Աստված ցանկանում է փրկել բոլորին, ասում է Մարիան, ներառյալ կարծրացած մեղավորներին: Բոլոր փրկվածները ներս կմտնեն երկրի վրա մի Նոր Դրախտ, ուր կունենանք միտք, մարմին և հոգի: Նրանք կապրեն հմայքի, սիրո, խաղաղության, ներդաշնակության մեջ և ոչ մի բանի կարիք չեն ունենա: Սա է այն ժառանգությունը, որն Աստված խոստացել է Իր բոլոր զավակներին:

Այն գերազանցում է մեր երևակայած ցանկացած բան, ասում է Մարիան, բայց ներս մտնել կարող են միայն նրանք, ովքեր շրջվում են դեպի Աստված և թողություն խնդրում:

Նրանք կունենան հավիտենական կյանք:

Եթե նրանք մերժեն Աստծուն, նրանք կնետվեն դժոխքի կրակների մեջ հակաքրիստոսի, կեղծ մարգարեի և բոլոր նրանց հետ միասին, ովքեր հետևում ենՍատանային:

Եվ մենք շատ ժամանակ չունենք: